39/9 11956

ՀԱՅԿՈՐՊ
ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 8 № 8

ՎԼ. ՖՈՄԻՑԿԻ

ՓԱՅԱՏԻՐՈՋ ՀԱՐՑԵՐԸ՝ ՎԱՐՁՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

ՀԱՅԿՈՐՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1929

ՀԵՂԿՈՄԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԵՆՐԻՄԵՏՅԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

334
Ֆ

№ 8

ՎԼ. ՖՈՄԻՉԿԻ

ՓԱՅԱՏԻՐՈՋ ՀԱՐՑԵՐԸ՝ ՎԱՐՉՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ՝ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎՈՒՄ

Ա 3988

ՀԱՍԱՐ. ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԿԵՆՏՐՈՆԻԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԳԱՆԳԵՄՏԻՆ

ՀԱՅԿՈՄՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1929 Թ.

ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 1727 (Բ) ՊԱՏ. № 1961
ՏԻՐԱԺ – 3000
ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ 1-ԻՆ ՏՊԱՐԱՆ

ՓԱՅԱՏԵՐԵՐԻ ԺՈՂՈՎԸ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՐՆ Է

Հոկտեմբերի 1-ից նոր տնտեսական տարի է սկսվում։ Բոլոր սպառողական ընկերությունները, մինչև այդ լրիվ հաշվետվություն պետք է կազմեն նախընթաց տարվա իրենց աշխատանքների մասին։

Հոկտեմբերի 1-ից մի առաջմանակ հետո (համենայն դեպս հունվարից վաղ ուշ) ընկերությունների վարչությունները պետք է հրավիրեն փայատերերի ռայոնական կամ ընդհանուր ժողովներ և հաշիվ տան նրանց։ Այդ ժողովները տարեկան հաշվետու ժողովներ անուն են կրում։

Դժվար չէ հասկանալ, որ սպառողական ընկերության կյանքում տարեկան հաշվետու ժողովները շատ մեծ նշանակություն ունեն։ Այս ժողովներում փայատերերը վարչությունից պետք է լրիվ և ճշմարիտ հաշվետվություն ստանան՝ ընկերության աշխատանքների ու վիճակի մասին, այդ հաշվետվությունը—քննության առնեն, արդարացի գնահատման յենթարկեն վարչության աշխատանքը ու ընկե-

թության վիճակը և ցուցմունքներ տան նոր վարչության, թե վերջինս ինչպես պետք է աշխատի հետագայում:

Ճիշտ այսպես էլ՝ փայատերերի ժողովը պետք է հետաքրքրվի ընկերության վերատուղիչ հանձնաժողովի աշխատանքով ու նաև նրանով, թե վերատուղիչ հանձնաժողովն ընկերության գործունեության վիճակին ինչ գնահատություն է տալիս:

Փայատերերի ժողովը ընկերության տերն է. վարչությունն ու վերատուղիչ հանձնաժողովը՝ նրա լիազորված ներկայացուցիչները:

Լիազորված ներկայացուցիչների հաշվետվությունը տիրոջ առաջ՝ ահագին նշանակություն ունի, վորովհետև աշխատանքը գնահատելու հետ մեկտեղ՝ նրանց ցուցմունքներ էլ են տրվում, թե ինչպես պետք է աշխատեն հետագայում. այս պատճառով էլ փայատերերը պետք է հաշվետու ժողովների ժամանակ ցույց տան, վոր իրենք իսկապես խելացի ու հաշիվ իմացող տերեր են:

Փայատերերն իրենց ժողովներում այն ժամանակ միայն կկարողանան հավետվությունից բան հասկանալ, յերբ վերջինս ընկերության աշխատանքների ու վիճակի պարզ ու լրիվ պատկերը կտա իրենց: Իսկ այդ կհաջողվի փայատերերին, յեթե նրանք լսելով վարչության ու վերատուղիչ հանձնաժողովի զեկուցումները՝ իրենք, ընկերության կատարած աշխատանքները ավելի լավ ըմբռնելու համար

մի շարք հարցեր կտան, վորոնց պատասխաններն էլ կոգնեն իրենց՝ լավ հասկանալու ընկերության ամբողջ աշխատանքը:

Նշանակում է փայատերը ժողովում պետք է ուշադրությամբ լսի զեկուցումները, այդ զեկուցումներից հետո հարկավոր հարցերը տա. զեկուցումների ու հարցերին տրված պատասխանների հիման վրա՝ կարծիք կազմի ընկերության աշխատանքի ու վիճակի մասին:

Դրանից հետո մի քանի դիտակից փայատերամբ համար դժվար չի լինի քննել, թե վարչության ու վերատուչիչ հանձնաժողովի հին կազմից ում պետք է վերընտրել նոր կազմի մեջ ու իր կարուկ խոսքը ասել, թե այդ նորընտիր կազմն այսուհետև ինչպես պետք է աշխատի:

Փայատերը լավ պիտի մտածի, թե հաշվետվությունը պարզելու համար իր հարցերից վորոնք են պետքական և ոգտավետ լինելու: Այս մեկ: Մյուսն էլ այն է, վոր փայատերը պետք է հասկանա, թե իր հարցին տված պատասխանը յերբ է բավարար և յերբ անբավարար: Որինակի համար ասենք՝ փայատերը հարցնում է վարչությանը՝ «մասնավոր առևտրականներին վարչությունն ապրանք ծախե՞լ է, արդյոք»: Վարչությունը կպատասխանի՝ «ծախում ենք ու ծախել ենք այսքան ապրանք, այսքան դումարի»: Այ՝ հենց այդտեղ է, վոր փայատերը պետք է գնահատի՝ հիշա է վարվել արդյոք վարչությունը, վոր մասնավոր առևտրականներին ապրանք է ծա-

խել։ Ուրեմն հարցի ամեն մի պատասխանը ինչպես և ամբողջ զեկուցումը, փայատերը տիրոջ նման պետք է գնահատի. նա պետք է մտածի՝ վարչությունը ինչո՞ւ է այդպես վարվել։

Կարող եր, արդյոք, վարչությունն ուրիշ կերպ անել։ Այդ վարմունքից ինչ ոգուտ, կամ ինչ վնաս է ստանում ընկերությունը։

Եթե մենք վերցնենք մասնավոր առևտրականներին ապրանքներ վաճառելու որինակը, փայատերն իսկույն պետք է ասի, թե այդպիսի առևտուրն անթույլատրելի յե, վոր այդպիսի վարմունքը ընկերության վնաս է բերում։ Բայց յերբ փայատերը քննի ու հասկանա այդ վարմունքի պատճառները, գուցե նա այն յեզրակացությանը գա, վոր վարչությունը այս դեպքում դժվար թե կարողանար ուրիշ կերպ վարվել—ապրանքը անշարժ վեր ընկած այդ շրջանում նրա պահանջը չկար, իսկ պարտքը վճարելու ժամկետը լրանում եր ահա վարչությունն ել վճռեց «մեղք գործել», այդ պատճառով ել ապրանքը ծախեց մասնավոր առևտրականին։ Անուշադիր փայատերը գուցե այդքանով ել կբավարարվի ու ել ուրիշ բան չի հարցնի, իսկ ուշքը դլխին փայատերը, ի հարկե, ել ավելի հեռու կդնա. նա կհետաքրքրվի, թե վարչությունն ինչու յե այն ապրանքներն առել, վորոնք ընկած են մնացել, ընկերությունն այդ ապրանքները ի՞նչ գնով է ծախել անդամներին և ինչ գնով մասնավոր առևտրականներին. վերատուդիչ հանձնաժո-

դրվն իմացե՞լ և, արդյոք, այդ առևտրի մասին. ինչպե՞ս և նա վերաբերվում այդ վարմունքին և այլն: Ահա այդ որինակներից ել մենք տեսնում ենք, վոր փայատերը պետք է կարողանա հարցեր տալ և այդ հարցերին տված պատասխանները հասկանալ: Մի հարցին տրված պատասխանը շատ անգամ մի շարք նոր-նոր հարցեր է ծնում. ուստի բոլոր հարցերն այնպես պետք է դնել, վոր վարչության և վերատուղիչ հանձնաժողովի այս կամ այն գործողության ու վարմունքի պատճառն ու հետևանքներն հասկանան ու ապա գնահատեն նրանց արած գործն ու վարմունքը:

Դրա համար մենք ուզում ենք դիտակից փայատիրոջն ոգնության հասնել. այս դրքույկով մենք ուզում ենք հիշեցնել նրան, թե հաշվետու ժողովում նա ինչով պետք է հետաքրքրվի և մասնավորապես, ինչ հարցեր պետք է տա ընտրյալ ներկայացուցիչներին—վարչությանն ու վերատուղիչ հանձնաժողովին: Բացի այդ, մենք ուզում ենք ոգնել փայատերերին հասկանալու նաև այն, թե իր հարցերին տրված պատասխաններից վորը ճիշտ կլինի և վարչության ու վերատուղիչ հանձնաժողովի արած գործից վորոնք և ինչ դեպքերում պետք է ընկերության համար ոգտակար համարել և վորպիսին ու յուրը վնասակար:

ՓԱՅԱՏԻՐՈՋ ՀԱՐՑԵՐԸ

1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Փայատերն ամենից առաջ պետք է հետաքրքրվի, թե ընկերության անդամների կազմի մեջ հաշվետու տարում ինչ փոփոխություններ են տեղի ունեցել։

Այս բանում նրան հետաքրքրողը հետևյալ հարցերը կլինեն՝

1. Հաշվետու տարում ընկերության մեջ քանի՞ անդամ է մտել։

2. Ընկերության անդամներից դուրս գալու համար քանի՞ դիմում է տրված։

3. Ընկերությունը ներկայումս քանի անդամ ունի։

4. Ընկերության անդամների թիվն ավելացնելու համար վարչությունը առանձնապես ինչ միջոցներ է ձեռք առել և ինչ են տվել այդ միջոցները։

5. Ի՞նչ պատճառներից դրդված անդամները հեռացել են ընկերությունից։

6. Ընկերության կազմի մեջ քանի՞ չքավոր կա, քանի՞ միջակ և քանի ունևոր, և գյուղի վո՞ր խավերն են ընկերության հետ ավելի կապված։

7. Ինչքան է ընկերության փայավճարը և անդամներից քանիսն են փայերը լրիվ վճարել:

8. Վարչությունն ի՞նչ է արել վորպեսզի դրդեն անդամներին լրիվ փայավճարը մուծելու:

9. Փայավճարները մուծելու գործում վարչությունը չքավորներին ի՞նչ արտոնություններ է տվել և ով է վորոշել այդ արտոնությունները:

10. Ինչքան է չքավորների կապիտալացման փոնդը ընկերության մեջ և ինչպես է ոգտագործված այդ փոնդը:

11. Ընկերության անդամների թվում քանի կին կա և քանի յերիտասարդ և կանանց ու յերիտասարդներին ընկերությանն անդամագրելու համար՝ ի՞նչ արտոնություններ են սահմանված:

Բոլոր այս հարցերը շատ հատարակ հարցեր են, և յերևի ամեն մի փայատեր ինքն էլ կհասկանա, թե այդ հարցերին վարչության տված պատասխաններից, վորոնք իրեն կգոհացնեն:

Փայատերը չահարդրված է, վոր ընկերությունն անդամներ շատ ունենա: Նա չահարդրված է, վոր այդ անդամները գիտակից մարդիկ լինեն, ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն, փայավճարները ժամանակին մուծեն և այլն:

Փայատերը—(եթե նա կուլակ չէ) հասկանում է, վոր ընկերության հետ անպայմանորեն առաջին հերթին պետք է կապված լինեն չքավորներն ու միջակները: Հենց այս գանի համար էլ նա կաշխատի իմանալու թե ինչու, որենան, չքավորներից շատերն ընկերութ. անդամ չեն, և պատճառը տասկասալ, այնպես կանի, վոր այդ պատճառները վերանան: Եթե գյուղում կա 100 ունևոր, 200 միջակ և 300 չքավոր գյուղացի, և եթե ընկերության անդամ են 50 ունևոր, 20 միջակ և 25 չքավոր, ապա ընկերության գիտակից անդամը կհասկանա, վոր ընկերության այդպիսի կազմն անբավարար է, վոր ընկերությունն ունևոր գյուղացիների ձեռքումն է: Ընկերության գիտակից անդամը վարչությանը ցուցմունքներ կտա, թե ինչպես պետք է ընկերության մեջ ներգրավել ավելի շատ չքավորներ ու միջակներ:

Ամենակարևոր հարցը չքավորների ու միջակների արտոնություններն հարցն է: Այդ արտոնությունները պետք է վորոշի փայատերերի ժողովը ինքը: Փայավճարներ մուծելու համար չքավորներին պետք է տրվի յերկարաև ժամանակամիջոց, ապա թե վոչ նրանք չեն կարող կապվել կոոպերացիայի հետ: Իրենց փայավճարները չքավորները կարող են մուծել վոքրիկ գումարներով, մթերքներով, ոնձնական աշխատանք կատարելով ընկերու-

թյան համար, նմանապես գնած ապրանքների համար հատանելիք պրեմիաները հաշվելով փայլաճարի տեղ:

Զբաղմունքների կոոպերացումը մեծ մասամբ պետք է կատարվի չբաղմունքների կոոպերացման ֆոնդից տրվող վարկերի հաշվին: Ուստի փայատերն առանձին ուշադրությամբ պետք է իմանա, թե ինչքան է այդ ֆոնդը, ինչպես է ապատադրծված, ինչ չափով է նպաստել չբաղմերի կոոպերացման գործին և այլն: Բացի այդ, փայատերը լավ պետք է տեղեկանա, թե չբաղմունքների ապատարկման համար վարչությունն ինչ արտակարգ միջոցներ է ձեռք առել (աշխատանական վարկի դեմ պայքարելու ֆոնդից վարկ տալը, պակասող ապրանքներ տալը, առաջին հերթին հաց մատակարարելն և այլն):

Ընկերության անդամներին, վորոնք ժամանակին չեն լրացնում իրենց փայլաճարը, չնայած վոր դրանց վճարելը ամենևին դժվար չի նրանց համար, պետք է նախազգուշացնել, վոր վճարումները ժամանակին չտալը պատճառ կծառայի՝ նրանց ընկերությունից հեռացնելու:

Բոլոր ընկերություններին համար պետք է սահմանվի հինգ տարվա փայլաճար, թե չի ընկերությունը կդժվարանա իր աշխատանքների կատարելու, վոր հինգ տարվուց բարձր փայլաճարը չբաղմին ու միջակին կիսրտանեցնի ընկերությունից: Փայլաճարը մուծելու

համար նրանց ժամանակ տալով՝ մենք նրանց անպայման կքաշենք ընկերության մեջ։

Այն ընկերությունները, որոնք հինգ ռուբլու փայավճարն արդեն հավաքել են, այնտեղ պետք է աշխատել յերկրորդ՝ լրացուցիչ փայ հավաքել, ձգտելով ամեն մի փայատիրոջ փայի գումարը տասը ռուբլու հասցնելու։

Փայատերը լավ պետք է հիշի, որ փայի դրամագլուխը կոոպերատիվի միջոցների հիմքն է։ Փայի դրամագլուխը մանավանդ հիմա պետք է ավելացնել, փայատերը գների իջեցումից ոգուտներ ստանալով պետք է իր ստացած ոգուտների մի մասը վերադարձնի իր կոոպերատիվին՝ փայերի դրամագլուխն ուժեղացնելու և հետագայում գներն եժանացնելու գործում կոոպերատիվի աշխատանքը թեթևացնելու համար։ Ամեն մի փայատեր պետք է հասկանա, որ որքան մեծ լինի կոոպերատիվի փայի դրամագլուխը, որքան քիչ է նա ստիպված ոգտվել պարտքով ձեռք բերած միջոցներից, այնքան կոոպերատիվը հեշտ կարող է իր աշխատանքներն եժանացնել։

Կանայք պետք է տպաւորական ընկերության անդամ դառնան. նրանք ամենից ավելի յեն շահագրգռված նրա աշխատանքով։ Գիտակից փայատերը պետք է իմանա, թե քանի կին արդեն ընկերության անդամ են և ընկերությանն անդամագրվելիս նրանց ինչ արտոնություններ են տրվում։ Փայատերը պետք է

խմանա, վոր այդ արտոնությունները ընկերության ժողովն է սահմանում։

Նույնն էլ յերիտասարդության համար, վորին անպատճառ պետք է ընկերության մեջ քաշել։

Փայատերը պետք է նաև հետաքրքրվի, թե ինչպես կուսակցականներն ընկերության անդամ են, արդյոք, կուսակցականները պետք է ուրիշներին որինակ ցույց տան, ուստի ամենից առաջ հենց նրանք պետք է կապվեն կոոպերացիայի հետ։

Վերջապես՝ անդամների ընկերությունից հեռանալու հարցերը։ Այս դեպքում ամենից կարևորը հեռանալու պատճառներն են։ Ժողովի համար այս հարցերը պարզելը շատ կարևոր է։ Հեռանալու պատճառները պարզելը շատ անդամ փայատերերին ստիպում է այս կամ այն միջոցները ձեռք առնել և նրանք ավելի առաջուց դիմում էլին տված լինում հեռանալու մասին, դրանից հետո դիմումները հետ են առնում։

Փայատերը առանձնապես ուշադրություն պետք է դարձնի, թե ընկերության կոոպերացումն ուժեղացնելու և թե անդամների կապն իրենց ընկերության հետ ամրացնելու համար փորձություն ինչ է անում։ Այս դեպքում փայատերերն ամենից առաջ պետք է հետաքրքրվեն, թե ինչպես և ընթացել կոոպերացման գործը՝ գնեն իջեցնելուց (եժանացնե-

լուց), հետո, յերբ մանավանդ բնակչության պետք և զգար կոոպերատիվի ուված մեծ ոգուտը:

Ուրեմն, փայատերը պետք է մտածի ուսի, վոր՝

Ընկերությունը, վորքան կարելի յե շատ անդամ ունենա.

Չքավորներն ու միջակներն ընկերության անդամագրվելու համար արտոնություններ ունենան.

Ամեն մի ընկերության մեջ ստեղծվի չքավորների կոոպերացման ֆոնդ և այն ճիշտ կերպով ոգտագործվի:

Ընկերության անդամագրվելու նպատակով կանանց ու յերիտասարդության համար վորոշ արտոնություններ սահմանվեն, հինգ ռուբլու փայավճար նշանակվի ու գանձվի:

Վարչությունը բոլոր միջոցներ ձեռք առնի անդամներին, առաջին հերթին չքավորների թիվն ավելացնելու և նրանց կապն ընկերության հետ ամրապնդելու:

Ընդհանրապես, վարչությունը մշտական աշխատանք կատարի ազգաբնակչության կոոպերացման և կանոնավոր կոոպերատիվ ապաստարկության համար:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ.

Առևտուրն ընկերության հիմնական աշխատանքն է: Ամեն ինչ կախված է այն բա-

նից, թե ինչ հիմքերի վրա յե դրված այդ աշխատանքը—և փայատերերի վերաբերմունքը դեպի ընկերությունը, և ընկերության պայքարի հաջողությունը՝ մասնավոր առևտրականի դեմ, և կապը բնակչության հետ, և վատի դրամապրոխների հալածելը: Ուստի չպետք է զարմանալ, որ առևտրական աշխատանքը հաշվետու ժողովում ամենից ավելի յե հետաքրքրել ընկերության անդամներին:

Միևնույն ժամանակ փայատերը մոռանալ պետք է հետաքրքրվի, թե ընկերության առևտրական աշխատանքի դրությունը ինչպես է ազդում դներն իջեցնելու աշխատանքի վրա:

Հավանական է, որ փայատերը վարչության ու վերատուչ հանձնաժողովին այսպիսի հարցեր տա:

1. Վարչությունը առևտրական աշխատանքի ծրագիր ունեցե՞լ է, արդյոք:

2. Ընկերությունն ինչ ապրանքներ է գրնել և փայատերերը մասնակցել են, արդյոք. գնումների տեսակը (չեշիդը) վորոշելիս:

3. Վարչությունը ապրանքները վորտեղից է գնել և ի՞նչ պայմաններով: Ապրանքներ գրնելու տեսակետից ընկերությունն ամենից շատ ո՞ւմ հետ եր կապված:

4. Մասնավոր առևտրականներից ապրանքներ գնել են արդյոք, և ինչից դրդված:

5. Գնած ապրանքներն ի՞նչ վորակի եյին:

6. Ապրանքներ փչանալու դեպքեր չ՞են յեղել, արդյոք: Ինչ է արել վարչությունն այդպիսի դեպքերում: Ինչն է փչանալու պատճառը:

7. Ի՞նչպես եյին ապրանքները ծախվում անդամներին ու վոչ անդամներին, և ինչ արտոնություններ են վայելել անդամները ապրանք գնելու ժամանակ:

8. Ի՞նչպես եր հաշվի առնվում անդամների կատարած առևտուրը:

9. Տարվա մեջ ինչքա՞ն են ապրանք գնել անդամները և վոչ անդամները:

10. Ընկերությունն ապառիկ ապրանք ծախո՞ւմ է արդյոք: Ո՞ւմ և ի՞նչ հիման վրա: Վարչությունը փայատերերի ժողովից թույլտվություն ստացել եր, արդյոք, ապառիկ ապրանք ծախելու համար: Ապառիկ ապրանք գնողները ժամանակին վճարում եյին, արդյոք, իրենց պարտքերը: Ուշացրած պարտքերն ո՞ւմ վրա յեն մնացել և վորքա՞ն:

11. Պակասումների, հափշտակության, վատնումների և այլ գեղծումների դեպքեր պատահել են, արդյոք, ընկերության մեջ և ինչով են արտահայտվել այդ դեպքերը: Ո՞վքեր են մեղավորները: Ինչ է արել վարչությունն այդ դեպքերի առթիվ:

12. Վարչությունը միջին թվով վորքա՞ն վերադիր եր գալիս ապրանքների վրա: Համապատասխանում են արդյոք ընկերության

կողմից տրված այդ վերադիրները վորոշված չափերին:

13. Ի՞նչ ծախսեր է ունեցել ընկերությունը շրջանառության նկատմամբ: Համապատասխանում են արդյոք, այդ ծախսերը այն չափերին, վոր վորոշված են ընկերության համար:

14. Ընկերության շրջանառության նկատմամբ վերադիրներն ու ծախսերն ավելացե՞լ են թե՞ պակսել:

15. Ինչ փոփոխության են յենթարկվել հիմնական ապրանքների գները տարվա մեջ, և ինչ չափով է ընկերությունն իր հաշվին գներն իջեցրել:

16. Ընդհանրապես ի՞նչ է արել վարչությունն ու վերստուգիչ հանձնաժողովը՝ ընկերության գներն իջեցնելու համար:

Դրանք ամենագլխավոր հարցերն են մի-այն: Առևտրական գործունեության մեջ կարող են ուրիշ շատ ելի վոչ պակաս կարևոր նշանակություն ունեցող հարցեր ել ծագել, վոր փայատերերը կարող են և պետք է դնեն վարչության առաջ:

Ինչպես ուրեմն հասկանա փայատերն այն պատասխանները, վոր վարչությունը տալիս է իրեն ուղղած հարցերին:

Ամենից առաջ փայատերը պետք է իմանա, վոր ամեն մի սպառողական ընկերություն իր առևտրական աշխատանքը պետք է կատարի վորոշ հաշվով ու ծրագրով: Լավ չի յերբ վար-

չությունն առևտուրն անում և «յա բախտ»։ դրանից շատ անգամ ձախորդություն է պատահում։

Առևտրական աշխատանքի ծրագիրը (պլանը) պետք է այնպես կազմված լինի, որ փայատիրոջ կարիքները բավարարի առաջին հերթին և որ այդ բանը կատարվի այն չափով, ինչ չափով ընկերությունն ունի իր սեփական միջոցները և վարկ ստանալու հնարավորություն։ Եթե ընկերության շրջանառությունները ավելի պիտի լինեն, քան ընկերության միջոցներն են թույլ տալիս այդ, վարչությունը փայատերերի հետ միասին պետք է մտածի, թե ինչ կերպ լրացուցիչ միջոցներ գտնի։ Այս է ահա ծրագրի մի յերեսը։ Ի՞նչ շրջանառություններ պետք է անի ընկերությունը և վո՞ր տեղից կարող է միջոցներ վերցնել այդ շրջանառությունների համար։

Ծրագրի մյուս յերեսն ել այն է, թե ընկերությունը յե՞րբ և ինչպիսի ապրանքներ պիտի գնի։ Փայատերն այս դեպքում ել պետք է հետաքրքրվի, թե վարչությունն ապրանքներ գնել է, արդյոք, այն ժամանակ, յերբ նրանց պահանջը կար, թե նա այդ բանը հաշվի չի առել։ Վարչությունը պետք է գնումների սեզոնը պահպանի, այսինքն՝ ապրանքները դրնի այն հաշվով, որ նրանց պահանջը ժամանակին բավարարի։

Ուրեմն, ինչպի՞սի ապրանքներ պետք է գնի ընկերությունը։ Այնպիսի ապրանքներ,

վորոնք հարկավոր են փայատերերի ու մնացյալ բնակչության առաջնակարգ կարիքները բավարարելու համար: Այ, հենց այս տեսակետից փայատերը պետք է գնահատի ընկերության գնումները: Նա ինքը պետք է ոգնի ապրանքների տեսակները (չեշիդը) վորոշելու գործին:

Հետևյալ հարցն այն է, թե ընկերությունն վորտեղից եր ապրանքներ գնում: Այս դեպքում փայատերը լավ պիտի իմանա, վոր ընկերությունն ամենից շատ պիտի վախենա մասնավոր առևտրականից ապրանքներ գնելուց: Գնումներ կատարելու գործում ընկերությունն ամենից սերտ իր Միության հետ պետք է կապված լինի: Եթե այդպիսի սերտ կապ չկա, փայատերը պետք է աշխատի պատճառները գտնել, իմանալ, թե ով է մեղավոր, վոր ընկերությունը Միության հետ այնքան էլ չի աշխատում: Եթե պատճառը վարչությունն է, փայատերը պետք է այդ պատճառը վերացնի: Եթե մեղքը Միությանն է, փայատերը պետք է ընկերության կողմից Միություն ուղարկած լիազորներին հրահանգի աշխատել Միության աշխատանքներն ուղղելու:

Փայատիրոջն անպատճառ պետք է հետաքրքրի այն հարցը, թե ընկերությունն ինչ ձևով է ապրանքներ գնում: Այս դեպքում փայատիրոջը կհետաքրքրի նախնական պատվերներով գնումներ անելու, ուրիշ ընկերություններ հետ միասին գնումներ կատարելու վե-

բաբերյալ հարցը և այլն։ Փայատերը գնումներ կատարելու ամեն մի ձևին պետք է մոտենա, թե այն տեսակետից, վոր կատարած գնումները ձեռնտու լինեն և թե այն տեսակետից, վոր բնակչության իր ժամանակին ու վորքան կարելի յե, լրիվ կերպով այս կամ այն ապրանքը մատակարարվի (հասցվի)։

Փայատերը մեծ ուշադրություն պետք է դարձնի վորակի (լավ վորակի) հարցին։ Նա ինքը, ընկերությունից ապրանքներ գնելով, պետք է ցույց տա այդ վորակը (լավ վորակը)։

Ընդհանուր ժողովը պետք է գնահատի բոլոր այն ապրանքների վորակը, վոր ընկերությունն ունի, և հասկանա, թե ինչն է այս կամ այն ապրանքի ցածր կամ անբավարար վորակ ունենալու պատճառը։ Ապրանքի վորակով պետք է հետաքրքրվել մեկ էլ այն պատճառով, վոր մեր պետական արդյունաբերությունը պետք է իմանա, թե սպառողն ինչպիսի գնահատություն է տալիս իր ապրանքին։ Այս պատճառով էլ ապրանքների վորակի հարցը փայատերերի համար առանձնապես խոշոր տեղ պիտի գրավի։

Ապրանքների գնահատումն ևս ընկերության աշխատանքներում շատ կարևոր մոմենտ է։ Այս դեպքում փայատերը պետք է հասկանա, թե ինչ ապրանքներ և ինչպես են գնահատվել։ Ապրանքներն այնպես պետք է գնահատվեն, վոր ընկերությունը ծախս ու մխսից դուրս մի փոքր էլ վաստակ ունենա և միաժա-

մանակ կոոպերատիվ ապրանքների գները, որքան կարելի է ցածր լինեն։ Ընկերության ունեցած ապրանքի գինը կախված է՝ գնած ապրանքների արժողությունից, ընկերության ծախսերից ու կուտակումների չափից (վերադիրների և ծախսերի մեջ յեղած տարբերությունից)։

Փայատերն—ամեն կերպ պետք է աշխատի, որ ընկերությունն իր ծախսերը քչացնի ու կուտակումները սահմանափակի ամենափոքր տոկոսով (շրջանառության հանդեպ, որ ավել քան մեկ և կեսից—յերկու տոկոս)։

Փայատերը, մանավանդ ուշադրությամբ պետք է ստուգի ընկերության վողջ աշխատանքը գներն իջեցնելու գործում։ Այդ դեպքում փայատիրոջը կհետաքրքրեն այն հարցերը, թե ընկերությունն ինչպես է վարվել իր համար նշանակված գների, ծախսերի ու վերադիրների նորմաների հետ, թե ինչ չափով են բնակչության մասսաները ներգրավված յեղել գներն իջեցնելու, խնայողական ռեժիմ անցկացնելու աշխատանքի մեջ, ինչպես են այդ աշխատանքին ոժանդակել տեղական, կուսակցական ու խորհրդային կազմակերպությունները և այլն։ Փայատերը պետք է իմանա Մ խության կարծիքն ընկերության աշխատանքի մասին՝ գներն իջեցնելու վերաբերյալ։

Փայատերը վարչությունից ու վերստ. հանձնաժողովից հաշիվ պետք է ստանա, թե ընկերությունն ինչպես է առաջ տարել 1926–27 թ.

ծախսերի 15 տոկոսի իջեցնելու գործը՝ 1925–26 թվի ծախսերի դիմաց և ընկերությանն ինչ չափով և հաջողվել կատարել վերադաս (իրենից բարձր կանգնած) կոոպերատիվ կենտրոնների կարգադրությունը 1926–27 թ. դիմաց. 1927–28 թ. ծախսերը 20 տոկոսով հետագայում կրճատելու մասին։

Այն ընկերություններում, որտեղ խանութային հանձնաժողովներ են ստեղծված փայատերը պետք և հետաքրքրվի այդ հանձնաժողովի աշխատանքներով՝ դներն իջեցնելու, փայատերերին սպասարկելու, (ծառայություն մատուցելու) գործը լավացնելու և այլ հարցերի վերաբերյալ։

Փայատերն անպատճառ պետք և վորոշի ու գնահատի վարչության վերաբերմունքը դեպի խանութային հանձնաժողովների աշխատանքները, վորպեսզի վարչության նոր կազմին արած իր ցուցմունքներում չեշտի, թե անհրաժեշտ և ամենաուշադիր վերաբերմունքը ցույց տալ խանութային հանձնաժողովներին ու նրանց աշխատանքներին։

Փայատերը պետք և պահանջի, վոր վերատուգիչ հանձնաժողովն ապրանքների գնահատումները ստուգի և ժամանակին վերացնի գրնահատությունների այս կամ այն պակասությունները։

Փայատերերին պետք և այն ել հետաքրքրվի, թե ընկերության մեջ ինչպես են պահվում ապրանքները։ Փայատերերը պետք և իմանան,

թե ապրանքները փչանալու ինչ դեպքեր են յեղել և ինչ պատճառով, և ով է դրանում մեղավորը: Այս դեպքում փայատերն անպատճառ պետք է իմանա, թե վարչությունն ու վերատուղիչ հանձնաժողովն ինչ միջոցներ են ձեռք առել վոր ապրանքները չփչանան և թե փչացած ապրանքներն ինչ են յեղել:

Ընկերությունն ապրանքներն կանխիկ (նագդի) հաշվով պետք է ծախի: Ապառիկ տալուց շատ զգուշ պիտի լինել—ավելի լավ է, ապառիկ ապրանք ծախելուց բոլորովին ձեռք քաշել: Փայատերերը պետք է ոգնեն վարչությանը դուրս պրծնելու հին պարտքերից, յեթե հին պարտքեր կան: Նրանք չպետք է մոռանան, վոր առևտուր անողների պարտք մնալը միջոցների չրջանառությունը (արորոտը) ծանրացնում է, իսկ շատ-անգամ էլ դեռ այդ միջոցները քշացնում է, վորովհետև ապառիկ առևտուր անողներից մի քանիսի վրա մնացած պարտքերը բոլորովին կորչում էլ են: Այս կանոնից կարող է բացառություն լինել միայն չքավորներին վարկավորելը վաշխառուական վարկի դեմ պայքարելու համար կազմված հատուկ ֆոնդի հաշվին, վորպիսին պետք է ստեղծվի ամեն մի ընկերության մեջ մաքուր վաստակից արած հատկացումների միջոցով (ոգուտից մի բան հետ դնելով):

Փայատերերը պետք է իմանան, թե ովքեր են ընկերությունից ապրանք գնողները և ինչ չափով է ընկերությունն առևտուր անում ան-

դամների հետ։ Ընկերությունը հիմնվում է այն նպատակով, որ ամենից առաջ և առաջին հերթին իր փայատերերի կարիքները բավարարի։ Այս հարցի պատասխանից կերևա, թե ընկերությունն ինչ չափով է կարողանում իր նպատակը կատարել։ Եթե առևտրի մասին վարչությունն այդպիսի տեղեկություններ տալ չի կարող, փայատերը պետք է պահանջ դնի, որ այնուհետև փայատերերի կատարած առևտրի հաշվառում մտցվի։ Այդպիսի առևտուրը հեշտ ու հարմար է հատուկ մարկաների միջոցով հաշվառման յենթարկվում։

Փայատերերի տուած ապրանքների հաշվառումը մարկաներով հնարավորություն է տալիս նրանց պարզևադրել տարեվերջում ընկերության մաքուր վաստակից։

Ամեն մի փայատեր պետք է պահանջ դնի, որ փայատերերի նյութական չահագրգռվածության հիմնական չափը լինի գնումների համար զուտ վաստակից պարգև տալը և բացի այդ հետևյալ արտոնությունները վերապահվեն հերթից դուրս ապրանք ստանալ, մեկ էլ այնպիսի ապրանքներ ստանալ, որոնք բոլոր ընակիչներին բավարարելու համար հերիք չեն անում։ Ընդհանրապես չպետք է մոռանալ, որ ընկերությունը փայատերերի համար է հիմնվում հենց այս պատճառով էլ փայատերը, վոչ փայատերի հետ համեմատած պետք է որոշ ոգուտ և առավելություն ունենան։

Իսկ ամենից ավելի փայտերերը պետք է հետաքրքրվեն այն հարցով, թե հափշտակության, վատնելու, պակասորդների և ուրիշ դեղծումների դեպքեր ընկերության մեջ չեն պատահել, արդյոք: Փայտերերը լավ պիտի հսկեն, որ այդպիսի դեպքերը հասարակության դործին վնաս են տալիս ու բնակչությանն սոխրում են կոոպերացիային չհավատալ: Պակասորդների, վատնումների, հափշտակությունների և բոլոր ուրիշ դեպքերը փայտերերն անպատճառ պետք է պարզեն, այսինքն այդ մասին նրանք հարցնեն թե վարչության, թե Վերատուչ Հանձնաժողովին և թե Միության Հրահանդչին, յեթե վերջինս ժողովին ներկա յե: Ժողովում պետք է պարզել ընկերության հասցրած ամեն մի վնասի պատճառները, ինչպես և պետք է դտնել այդ վնասները պատճառողին:

Փայտերերը պետք է հիշեն, որ վատնողներին իրենք ներել չեն կարող, որ կոոպերատիվ դույքը վատնողներն ու հափշտակողները պետք է դատի տրվեն: Հիմա վճռական պայքար է մղվում կոոպերացիայում կատարվող հափշտակությունների դեմ և փայտերերը, որպես կոոպերատիվի տերերը, ամենից առաջ չահագրգռված պիտի լինեն այն բանով, որ չարաշարությունները վանվեն կոոպերացիայից:

Փայտերը ընկերության աուդիտորական աշխատանքը պետք է գնահատի հետևյալ հար-

ցի պատասխանի հիման վրա՝ թե վարչության ու վերատուգիչ հանձնաժողովի այս կամ այս արարքն ինչպես է ազդել ընկերության գների դրության վրա, թե ընկերության վողջ աշխատանքը ինչ չափով է նպաստել կոոպերատիվ գներն իջեցնելուն և փայատերերի ու բնակչության սպառողական կարիքները լրիվ չափով բավարարելուն:

Հետևապես փայատերը չպետք է մոռանա վոր ընկերության համար կարևոր է՝ աշխատանքի ծրագիր ունենալ:

Միության հետ սերտ կապ պահպանել, աջակցել պետությանը՝ ապրանքների վորակը բարձրացնելու (լավացնելու համար) իր մոտ պայքարում: Փայատերերին արտոնություններ տալ· ապառիկ ապրանք ծախելուց խուսափել կռվել պակսորդների, վատնումների և այլ գեղծումների դեմ: Աշխատել՝ ծախսերը կրճատել, վերադիր գները պակսեցնել, առևտրական կուտակումները սահմանափակել ապրանքների ու մթերքների գները վորոշակի կարելի յե իջեցնել:

Այն սպառողական ընկերությունների փայատերերը, վորոնք մթերման (պատրաստելու ու սպառման աշխատանքներ են կատարում պարզ է, վոր պետք է հետաքրքրվեն հետևյալ հարցերով:

Ընկերության մթերման ու սպառման աշխատանքի չափերի խնդրով, այն մասին, թ

ումն են վանառել մթերած մթերքները ու հումույքը (հում նյութերը)։

Ինչ աստիճանի յե յեղել ընկերության կապը փայատերերի հետ՝ սրանց մթերքները ու հումույքը մթերելու և վանառելու գործում։

Ընկերության մթերման ու ապառման գործառնությունների շահավետության ու նպատակահարմարության մասին։

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Փայատերը չի կարող չհետաքրքրել ընկերության ֆինանսական վիճակը։ Փայատերը լավ և հասկանում, որ ընկերության աշխատանքը շատ բանով կախված և իր վիճակից։

Այս դեպքում փայատերը հետևյալ հարցերն և տալիս.

1. *Ընկերությունն իր սեփական միջոցներն ունի և այդ միջոցները գտնվում են, արդյոք, առևտրի շրջանառության մեջ։ Շրջանառության մեջ դրած գումարներից իր սեփական մեկ ռուբլուն քանի ռուբլին և ուրիշինը։*

2. *Ընկերությունն ինչ ավելորդ գույք ունի։*

3. *Ինչ արագությամբ են գտնվում (ապառում անում) ընկերության թանգարժեք բաները։*

4. *Աշխատանքի մեջ ընկերությունը դրամական դժվարություններին հո չի հանդիպում։*

5. Չեն պատահել դեպքեր, յերբ ընկերությունը չի կարողացել մուրհակներն ազատել, մուրհակները բողոքարկման (պրոտեստի) են տրվել։

6. Ինչպե՞ս է նայում Միությունը ընկերության վիճակի վրա։

Այս բոլոր հարցերը հասկանալի յեն։

Առանձին ուշադրությամբ պետք է հետևվել նրանց պատասխաններին։

Ամեն մի ընկերություն, վորքան կարելի յե սեփական շատ միջոցներ պետք է ունենա։ Նրա այդ միջոցները պետք է կազմվեն փայավճարներից ու ընկերության սեփական դրամագլուխներից (ոգուտից հետ դրած)։ Բայց դա դեռ քիչ է։ Պետք է վորքան կարելի յե իր միջոցների մեծ մասը շրջանառության մեջ լինի։ Իսկ դրա համար ընկերությունն ավելորդ գույք չպիտի ունենա և ընկերությունն իր միջոցները չպետք է արժեքավոր այնպիսի բաներ դարձնի, վորոնք շրջանառության մեջ չեն մտնում։

Կենդանի առևտրի շրջանառության մեջ սեփական միջոցները, վորքան շատ, ընկերության համար, այնքան լավ։ Եթե հաշվետվությունը փայատիրոջը ցույց տա, վոր ընկերությունը ավելորդ գույք կամ անշահավետ ձեռնարկություններ ունի, փայատերը պետք է ձայն տա, վոր ընկերությունն այդպիսից վորքան կարելի յե շուտ ազատվի։

Պետք է, որքան կարելի է աշխատել միջոցները մեռած կապիտալից (իսկ դու

քը, շինությունները ու այլ բաներն էլ հենց մեռած կապիտալ են) շրջանառության մեջ փոխարկել։ Շրջանառություն առաջ ընկերության հոգին է։ Շրջանառությունը, որքան լրիվ լինի, ու ինչքան վայելճարների և ընկերության սեփական միջոցների կատարվի, այնքան լավ, որովհետև ընկերությունն ազատված կլինի փոխառության միջոցների համար տոկոսներ վճարելուց։

Չե՞ որ այդ տոկոսները ծախսերի աճում, վերջիվերջ դումարների ավելցում և հետևապես, ընկերության ապրանքների վաճառքի գների բարձրացում առաջ կբերեն։

Փայատերը պետք է հետևի, որ ընկերությունն ազատվի ապրանք առանալով չասրվի։ Պետք է աշխատել, որ երբև ապրանքային վարկ, պարտք տրած միջոցները, մոտավորապես, մեկ և կես—յերկու անգամ ավելի լինեն շրջանառության մեջ ունեցած սեփական միջոցներից, ուրիշ խոսքով, որ սեփական միջոցների ամեն մի ռուբլուն մեկ և կես—2 ռուբլուց ավելի չընկնի ուրիշից պարտք տրած։ Ինքնաբերաբար հասկանալի է, որ առանց կարիքի ուրիշի միջոցներից ոգտվելու կարիք չկա, յեթե շրջանառության համար միայն սեփականը բավական է,—ավելի լավ—ուրիշի միջոցներից ոգտվելու համար չպետք է տոկոսներ վճարել։

Ընկերության միջոցը մեծապես կախված է այն բանից, թե ընկերությունն ինչ չափով և կարողանում դանձել իր արժեքները (փող, ապրանք, առևտուր անողների պարտքը)։ Փայատերը պետք է ուշադրությամբ հետևի ու իմանա, թե ընկերությունն առանց շրջանառության մեջ դնելու հո մեծ դումարներ չի պահում դրամարկղում, ապրանքների ավելորդ պաշար հո չունի, ընկերության միջոցների շրջանառության արագությունը հո չի դանդաղի այն բանից, որ նա վատ տեսակի ապրանքներ ունի և այլն։

Փայատերերն ուղղակի պետք է հարցնի, թե ընկերությունն իր աշխատանքների մեջ դրամական դժվարություններ հո չի հանդիպում։ Եթե պարզվի, որ այդպիսի դժվարություններ կան, փայատերն այդ դժվարությունների պատճառը պետք է գտնի և աշխատի պատճառները վերացնել։ Եթե փայի դրամագլուխը չի բավականացնում, փայատիրոջ առաջին պարտականությունն այն է, որ ոգնի լրացուցիչ փայավճարներ հավաքելու գործին և նրանց, ովքեր լրիվ կամ լրացուցիչ փայավճար չեն մուծել, ստիպի այս բանը շուտ անեն։

Բացի այդ, փայատերը պետք է հետաքրքրվի ընկերության մեջ փայատերերի կողմից տրվող ավանդներով։ Փայատերն ամեն կերպ պետք է նպաստի այդ գործառնությունների (ոպերացիա) զարգանալուն, վորպեսզի ըն-

կերությունը կարողանա աշխատել սեփական և ավանդների ու փոխառությունների ձևով հավաքած տեղական գումարներով:

Մուրհակների բողոքարկվելն ընկերության համար մեծ դժվարություն է: Եթե մուրհակը բողոքարկված է, աշխատանքը շատ է դժվարանում, վորովհետև այն ընկերությունը, վոր թողել է իր մուրհակը բողոքարկվի, այլևս չեն հավատում ու ապառիկ չեն տալիս: Փայատերը վարչությանը պետք է հանձնարարի աշխատել բողոքարկումները վերացնել և աշխատանքը այնպիսի հիմքերի վրա դնելու, վոր այլևս բողոքարկումներ չլինեն:

Եթե Մխիթյան հրահանգիչը ներկա չի ժողովին, փայատերը նրան պետք է հարցնի, թե Մխիթյանը ինչպես է նայում ընկերության վիճակի վրա: Եթե հրահանգիչը ներկա չի ժողովին, վարչությունը հրահանգչի վերջին զրույցը զեկուցումից պետք է կարդա ընկերության վիճակի գնահատականը:

Փայատերը չպետք է մոռանա, վոր ամեն մի ապառողական ընկերություն շրջանառության մեջ իր սեփական միջոցները պետք է ունենա:

Ամեն մի ընկերություն պետք է աշխատի, վորքան կարելի է շատ տեղական միջոցներ գրավել, իբրև փայատերերի ավանդներ:

Ընկերությունը իր գործառնությունների համար վոչ մի դեպքում չպետք է տարվի վարկային ընկերություններով:

Ընկերությունն իր պարտաքղթերով ճիշտ ժամանակին պետք է վճարի, ավելի վախենալով ամենամեծ դժվարություններից—մուրհակների բողոքարկվելուց:

Փայատիրոջից հենց իրենից, փայավճարները մուծելու իր ճշտապահությունից և ընկերության ավանդատեր գործառնություններին մասնակցելուց զգալի չափով կախված է ընկերության վիճակը:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ

Փայատերը չի կարող լուրթյամբ անցնել ընդհանուր հարցերի մոտից ևս:

Ընդհանուր հարցեր ասելով մենք, մասնավորապես, հետևյալ հարցերն ենք հասկանում:

1. Վարչությունն ու վերահսկիչ հանձնաժողովն իրենց աշխատանքների համար վարձատրություն ստանում են, արդյոք, և ինչպիսի:

2. Ընկերության ծառայողները ինչպես են վարձատրվում:

3. Ինչպես է ընկերության կապը տեղական կազմակերպությունների հետ:

4. Ինչպես են դասավորված ընկերության հարաբերությունները մյուս կոոպերատիվների հետ:

5. Ինչ հասարակական ռ. կոոպերատիվ լուսավորության աշխատանքներ է կատարում ընկերությունը:

Փայտիրոջ մեջ ելի ուրիշ շատ հարցեր կարող են ծագել. և խանութում առնուած ապրանքի ժամանակի մասին, և գործակատարի վերաբերմունքի մասին դեպի գնորդը (մուշտարին), և ժողովների ժամանակի մասին, և վարչության գործաց նիստերի անհրաժեշտության և ուրիշ շատ բաների մասին: Այս հարցերը կարելի յե և նույնիսկ պետք է տալ վարչությանն, ի հարկէ, այն ժամանակ, երբ վարչությունն ինքն իր հաշվետու գեկուցման մեջ այդ հարցերը չի շոշափել: Վերոհիշյալ հինգ հարցերն անպատճառ քննության պետք է առնվեն հաշվետու ժողովում:

Վարչության վարձատրության հարցը մեծ ու բարդ (ծանր) հարց է: Մեզանում քիչ դեպքեր չեն պատահում, որ վարչություններն իրենք են իրենց ոռճիկ նշանակում, և շատ անգամ նշանակում են, առանց գումարներից քաշվելու: Այսպես ել և պատահում, որ վարչությունը մեծ աշխատանքներ է կատարում և այդ աշխատանքների համար կամ փշրանքներ է առնում, կամ նույնիսկ բոլորովին վոչինչ չի առնում: Թե մեկը և թե մյուսը հավասար չափով վատ է: Փայտերը պետք է պարզ դիտենա, որ վարչությունն իր աշխատանքների համար առնում է այն վարձատրությունը, որ հասնում է իրեն: Վարչությունը ձրի չպետք է աշխատի և վոչ մի դեպքում կոոպերատիվին այն աչքով չպետք է նայի, թե իր սեփական հարստության աղբյուրն է: Թե ինչ

վարձատրություն պետք է նշանակել Վարչության ու ծառայողներին, այդ մասին Միության հրահանգիչը խորհուրդ կտա: Փայատերերը հենց այս առաջարկությունն էլ պետք է կյանքի մեջ կիրառեն (մտցնեն-կատարեն):

Նույն բանն էլ ընկերության վարձու ծառայողների նկատմամբ պիտի ասել:

Փայատերերն ամենևին էլ չպետք է ասեն, թե մեզ ինչ փույթ, թե ընկերության ու կուսակցական, խորհրդային և հասարակական կազմակերպությունների միջև ինչ կապեր են ստեղծվել: Փայատերերը պետք է աշխատեն, վորպեսզի այդ կապերն այնպես լինեն, վոր ընկերությունը կարողանա ավելի լավ ու լիովին լուծել (վճռել) իր անելիքները: Բոլոր այդ կազմակերպությունները հավասար չափով (չահագրգռված են կոոպերացիայի զարգացմամբ և նրանց ոգնությունն ու խորհուրդներն ընկերությունն միշտ էլ պետք է ոգտագործի:

Գյուղի մյուս կոոպերատիվների (գյուղատնտեսական, վարկային, արհեստագործատնայնագործական և այլն) հետ ունեցած կապի հարցը նույնպես պետք է գրաղեցնի փայատերերին: Այստեղ պետք է հիշել, վոր զանազան տեսակի կոոպերատիվներ, զանազան ճանապարհներով ու զանազան կողմերով գյուղացիությանը դեպի ընդհանուր նպատակն են տանում, այսինքն դեպի տնտեսությունը նոր հիմքերով վերակառուցելը (նորից չինելը) դե-

պի նոր կուլտուրական կյանքը, դեպի սոցիալիզմն են տանում։

Այս պատճառով, դանդաղն տեսակի կոոպերատիվներ աշխատանքները պետք է իրենց մեջ բաժանեն և այդ աշխատանքների մեջ իրար ոգնեն։

Ամեն մի ընկերություն կազմակերպչական ու կոոպերատիվ կրթական աշխատանք պետք է կատարի։ Փայատերերն այս աշխատանքը թեկուզ հենց իրենց վրա պետք է փորձեն։ Նա հարց պետք է տա, թե ինչ է տվել իրեն այդ աշխատանքը և ինքն այդ աշխատանքի հետևանքով ինչ չափով է սկսել դիտակից կերպով վերաբերվել դեպի կոոպերացիան։

Դիտակից փայատերը կոոպերացիայի ույժն է, այս պատճառով էլ կոոպերատիվ կրթական աշխատանքին, որքան կարելի յե շատ ժամանակ պետք է նվիրել ու մեծ ուշադրություն դարձնել։ Փայատերը մասնավորապես պետք է հետաքրքրվի կոոպերատիվ ակտիվի աշխատանքների հարցով և այն բանով, թե կոոպերատիվ կրթական նպատակների համար հատկացված (հետ դրած) գումարներն ինչպես են ոգտագործվել։

5. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՐՑԵՐԸ

Վերոհիշյալ հարցերից շատերը փայատերը վոչ միայն վարչության այլ և Վերստուգիչ Հանձնաժողովն էլ պիտի տա։ Բացի

այդ, Վերատուգիչ Հանձնաժողովից նա պետք է իմանա։

1. Ինչ է արել հանձնաժողովը հաշվետու տարում՝ ընկերության աշխատանքներն ու վիճակը լավացնելու համար։ Առանձնապես ինչ է արել հանձնաժողովը՝ գներն իջեցնելու համար։

2. Ինչ գնահատական է տալիս հանձնաժողովն ընկերության բոլոր աշխատանքներին։

Վերատուգիչ Հանձնաժողովը «չնորքի» համար հո չի ընտրվում, մեծ աշխատանքների համար է ընտրվում։ Վերատուգիչ Հանձնաժողովն իր աշխատանքների համար վճայաթերթը մանրամասն հաշիվ պետք է տա։ Ոչ թե վորում իր այդ աշխատանքն այն մտքով պետք է հասկանա, վոր վորքան կարելի յե, վարչության ավելի ոգնած լինի իր աշխատանքներում։ Վերատուգիչ Հանձնաժողովը վարչությանը յերես չպիտի տա, յերբ այդ վարչությունը սխալ կամ ընկերության վնաս բաներ է անում, Վերատուգիչ Հանձնաժողովը շարունակ ընկերության շահերը պետք է պաշտպանի։ Այդ պատճառով, Վերատուգիչ Հանձնաժողովը պետք է ընկերության ապրանքների, դրամների ու մատյաններում դրանցումների (դավթար գրելու) ստուգում կատարի։ Եթե այս բոլորը Հանձնաժողովը չի կատարում—վճայաթերթը իրավունք ունեն Հանձնաժողովին դատապարտելու։

Փայտերը նոր Վերատուդիչ Հանձնաժողովին պետք է ասի, վոր ընկերության մեջ նրա դերը շատ մեծ է և լավ չաշխատելու համար հանձնաժողովը պետք է պատասխանատվություն կրի, դուցե, վոչ պակաս, քան վարչությունը։

Այս պատճառով, փայտերը նոր Վերատուդիչ Հանձնաժողովին աշխատանքի մասին հրահանգներ պետք է տա։

ՑԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այն հարցերը, վոր մենք հիշեցինք նախընթաց գլուխներում, փայտերը, իհարկե, միանգամից չի տալու։ Շատ կարելի է, վոր այդ հարցերից շատերն ավելորդ լինեն, վորովհետև նրանց մասին վարչությունն ինքը, կամ Վերատուդիչ Հանձնաժողովը կկարողանա հաշվետու զեկուցումների ժամանակ։ Այնուամենայնիվ, ավելորդ չի լինի յեթե փայտերերն այդ հարցերի հետ ծանոթանան. այդ հարցերը նրանց մեջ նոր մտքեր կառաջացնեն, ընկերության աշխատանքների գնահատությունը կհեշտացնեն, կոգնեն նրանց հասկանալու, թե վարչության սրած գործերից վորոնք են ընկերության համար ոգտակար և վորոնք վնասակար։ Այդ հարցերին ծանոթ լինելը պետք է բարձրացնի փայտերոջ գիտակցությունը։

Իսկ այդ ամենագլխավոր բանն է, և ամենագլխավորն այն պատճառով, վոր իր կոոպե-

բատիվի աշխատանքներով յեռուն ու բազմակողմանի կերպով հետաքրքրվող ամեն մի փայատեր, ուժ ու միջոցներ կգտնի՝ ամուր ուղիղ հիմունքների վրա դրած ու լավ աշխատող կոոպերացիա ստեղծելու։

Մեր գյուղացիության ու մեր բանվորագյուղացիական յերկրի համար հենց այդպիսի մի կոոպերացիա յել պետք է։ Այդպիսի մի կոոպերացիա հարկավոր է մանավանդ հիմա, յերբ Խորհրդային Միության ամբողջ աշխատավորության առաջ յերկրի ինքնապաշտպանությունն ամրացնելու, Խորհրդային Միության տնտեսական հզորությունն ուժեղացնելու խնդիրներն են ծառացած։



ՑԱՆԿ

Եջ

ՓԱՅԱՏԵՐԵՐԻ ԺՈՂՈՎԸ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՐՆ Ե. 3

ՓԱՅԱՏԻՐՈՋ ՀԱՐՑԵՐԸ

. Ընկերության անդամների թիվը 8
. Ընկերության առևտրական աշխատանքը . . 14
. Ընկերության ֆինանսական վիճակը . . 27
. Ընդհանուր հարցեր 32
. Վերատուգիչ Հանձնաժողովի հարցերը . . . 35
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 37

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038237

[084]

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

A I/3988

«ՀԱՅԿՈՈՊ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԻՐԱՆ

1. Գ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ.—*Անպամանդրվիր կոոպերատիվին և մուծիր փայամնաբդ* . . . 6 կ.

2. Ա. Ս. ՑԻՆԳՈՎԱՏՈՎ.—*Ստուգիր և ուղղություն տուր կոոպերատիվիդ աշխատանքին* 46 եջ . . . . . 10 կ.

3–4. Ս. Ս. ԴԵՆԻՍՈՎ.—*Կոոպերատիվիդ տեսությունը* 74 եջ . . . . . 20 կ.

5. Ս. ԴԵՆԻՍՈՎ.—*Հուշատետր գյուղկոոպի խանութային հանձնաժողովների անդամներին* 45 եջ . . . . . 5 կ.

6–7. Ս. Ս. ԴԵՆԻՍՈՎ.—*Վերատուչ հանձնաժողովը փայատիրոջ աչքին* և 68 եջ 20 կ.

8. Վ. ՋՈՄԻՑԿԻՑ.—*Ի՞նչ մասին և ի՞նչպես դեկուցել* 56 եջ . . . . . 10 կ.

9. Վ. ՋՈՄԻՑԿԻՑ.—*Փայատիրոջ հարցերը՝ վարչության ու վերատուչ հանձնաժողովին* . . . . . 10 կ.